

*Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2010 թվականի հոկտեմբեր ամսվա նախադեպի ամփոփում*

Հաշտարարի գրասենյակը 2010թ.-ի հոկտեմբեր ամսվա ընթացքում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 60 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 60 բողոքներից 10-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 50 բողոքներից 18-ը հոկտեմբեր ամսին ստացվել են գրավոր տեսքով:

<b>2010թ.-ի հոկտեմբեր ամսին ներկայացված ընդհանուր բողոքների քանակը</b>	<b>60</b>
<b>1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից</b>	<b>50</b>
1.1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից, սակայն Հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	27
1.2. Բավարարվել են Կազմակերպության կողմից՝ Հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որն օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	2
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվել պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր Հաճախորդի՝ որպես սպառողի, շահերի ոտնահարման փաստը	3
1.4. Ընդունվել են քննության գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	18
1.4. 1. վարկային գործարքների հետ	3
1.4.2. ապահովագրական հատուցումների հետ	2
1.4.3. գրավատների գործունեության հետ	13
<b>2010թ.-ի հոկտեմբեր ամսին գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքներ, ուղղված՝</b>	<b>18</b>
Բանկերի դեմ	3
Ապահովագրական ընկերությունների դեմ	2
Գրավատների դեմ	13

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: [info@fsm.am](mailto:info@fsm.am) Web: [www.fsm.am](http://www.fsm.am)